ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՄԱՐԱՂԱՑՈՒ «ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅՈՒՄ» ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ*

DOI: 10.54503/2738-277X.2026.1(23)-157

Սիրունյան Տիգրան
բանասիրական գիտություններու թեկնածու,
ԿԳՄՄՆ «Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ,
գիտաշխատող. Մ. Մաշտոցի անվան «Մատենադարան»,
ավագ գիտաշխատող. tigran.sirunian@gmail.com

Բանալի բառեր. ունիթոռներ, քերականություն, խոսքի մասեր, անուն, բայ, Բոեթիուս, Պրիսցիանուս:

Ներածություն

Հայ տրամաբանության մեջ եվրոպական սխոլաստիկ բովանդակության մուտքը մեծապես պայմանավորված է լատին վարդապետ Բարդուղիմեոս Մարաղացու[1] «Դիալեկտիկայով» (ամբողջական վերնագիրը՝ «Հաւաքումն համառօտ եւ յոյժ օգտակար ի

---

* Ներկայացվել է 05.07.2026, գրախոսվել՝ 21.07.2026:

[1] Բարդուղիմեոսի հայկական մականունը (Արևելքում նրա քարոզչական առաքելությունը սկսվել է Մարաղայից և հայերի շրջանում ճանաչում է ստացել իբրև Մարաղացի): Եվրոպական ակադեմիական գրականության մեջ հայտնի է *դե Պոդիո* (de Podio) մականվամբ, որի ծագումը ստույգ չէ, բացատրվում է երկու տեղանվան հիմքով՝ իտալական (Poggio) և ֆրանսիական (Puy) (տե՛ս **M.-A. van den Oudenrijn**, *"L'évêque dominicain fr. Barthélemy, fondateur supposé d'un couvent dans le Tigré au 14e siècle"*.– Rassegna di Studi Etiopici, 5, 1946, p. 16): Դոմինիկյան պատմագրության մեջ հիշատակվող մյուս մականունները՝ *Bononiensis* (Բոլոնիացի կամ Բոնոնիացի) և *Parvus* (Կրտսեր), ըստ Վան դեն Աուդենրեյնի՝ Բարդուղիմեոսին վերագրվել են նույնանուն այլ անձանց հետ շփոթության հետևանքով (տե՛ս նույն տեղում, էջ 12, նաև նույնի *Linguae Haicanae Scriptores Ordinis Praedicatorum*

դիալէտիկէն, որ է տրամաբանութիւնն», 14-րդ դ. 1-ին կես)։ Այս գործի հիմքը արիստոտելյան-բոեթիուսյան ավանդույթն է (անտիկ ուսմունք և մեկնողական լրացումներ), կառուցված է 13-րդ դ. փիլիսոփա Պ. Իսպանացու "Tractatus" երկի հետևողությամբ (հետագայում՝ "Summulae logicales" («Տրամաբանական կարճ ամփոփումներ») անվանումը)[2]։

Բարդուղիմեոսը տրամաբանական մեկնությունները, ըստ անհրաժեշտության՝ որևէ հարց հանգամանորեն ներկայացնելու համար, լրացրել է հարակից գիտության՝ քերականության տվյալներով, երբեմն էլ ընդհանուր առարկայից ելնելով (խոսքը մեկնելիս, որը երկու գիտություններն էլ ուսումնասիրում են)՝ հաղորդել է քերականական տեղեկություններ[3]։

Ա. Խոսքի մասերի մասին (ձևաբանական հարցեր)

Խոսքի մասերի քանակը Բարդուղիմեոսը ներկայացնում է ըստ տրամաբանական և քերականական ավանդույթի. «Իսկ գիտելի է, զի դիալէթիկոսն դնէ միայն երկու մասունս բանին, այսինքն՝ անուն եւ բայ, իսկ քերթողն դնէ ութ մասն։ Իսկ դիալէթիկոսն զայլ վեց մասունս կոչէ սինքաթէգրամաթայ, որ է՝ առնշանական» (ՄՄ

Congregationis Fratrum Unitorum et FF. Armenorum Ord. S. Basilii citra Mare consistentium quotquot huc usque innotuerunt, Bern, 1960, p. 20)։

[2] Տե՛ս **M.-A. van den Oudenrijn**, *Notes sur quelques ouvrages Armeniens de provenance Dominicaine*.– Բազմավէպ, 1-2, 1982, էջ 60-61, **Տ. Միրունյան**, *Բարդուղիմեոս Մարաղացու տրամաբանության լատիներեն աղբյուրները. «Դիալեկտիկա» և "Summulae Logicales"*.– Էջմիածին, Զ, 2019, էջ 44-66, Է, 2019, էջ 106-119։

[3] «Դիալեկտիկան» որպես հարակից աղբյուր օգտագործած Լ. Խաչիկյանը նկատել է այս շերտը՝ գրելով՝ Բարդուղիմեոսը «լայն տեղեկություններ է ունեցել նաև քերականության տարբեր հարցերի մասին» (**Լ. Խաչիկյան**, Քոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը.– Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, Ե., 1977, էջ 48)։

69, 278բ): Հիմքը լատին քերական Պրիսցիանուսի "Institutiones grammaticae" («Հրահանգներ քերականության») աշխատությունն է, անմիջական աղբյուրը՝ Պետրոս Իսպանացու "Tractatus"-ը, հմմտ.՝ “Partes igitur orationis sunt secundum dialecticos duae, nomen et verbum, quia hae solae etiam per se conjunctae plenam faciunt orationem, alias autem partes 'syncathegoremata', hoc est consignificantia appellabant” («Արդ, ըստ տրամաբանների, խոսքի մասերը երկուսն են՝ անունը և բայը, որովհետև միայն սրանք են, որ նույնիսկ ինքնուրույն կապակցությամբ կազմում են ամբողջական խոսք, իսկ մյուս մասերը կոչում էին «սինկատեգորեմատա», այն է՝ համանշանակող») (Prisc. Inst., 54) – “Et sciendum est quod dialeticus ponit duas partes orationis tantum, scilicet nomen et verbum, alias vero partes appellat sincathegoremata, idest consignificativa” (Hisp., Tr. I, 3) («Եվ պետք է իմանալ, որ տրամաբանը դնում է միայն երկու խոսքի մաս՝ անուն և բայ, իսկ մյուս մասերը կոչում է «սինկատեգորեմատա», այսինքն՝ համանշանակող». այս և հաջորդ թարգմանությունները հոդվածագրինն են):

Խոսքի մասերից առանձին սահմանված են միայն նրանք, որոնք ճանաչում է տրամաբանությունը՝ անունը և բայը: Սահմանումները տրված են ըստ արիստոտելյան ավանդույթի, անմիջական աղբյուրը Պ. Իսպանացու "Tractatus"-ն է. «Անուն է ձայն նշանական՝ ըստ կամաց, առանց ամանակի, որոյ ոչ ինչ մասն զատեալ նշանակէ որոշակի, ուղղակի» (ՄՄ69, 274բ) – “Nomen est vox significativa ad placitum sine tempore, cuius nulla pars significat separata finita recta“ (Hisp., Tr., 2), «Բայ է ձայն նշանական՝ ըստ կամաց, ամանակաւ, որոյ մասն ոչ է նշանական՝ զատեալ որոշակի, ուղղակի» (ՄՄ 69, 276ա) – “Verbum est vox significativa ad placitum cum tempore, cuius nulla pars significat separata finita recta” (նույն տեղում)[4]:

[4] Հմմտ.՝ նաև՝ Արիստոտելի "Perihermeneias" («Յաղագս մեկնութեան») երկի հայերեն հնագույն թարգմանության մեջ առկա անվան և բայի սահմանումները (թարգմա-

Սրանց մեջ առանձնացվում են այն ձևերը, որոնք լինելով ինքնին իմաստակիր՝ հանդես են գալիս որպես դատողության բաղադրիչներ (*ենթակա* և *ստորոգյալ*)։ Ըստ այդմ՝ *անուն* համարվում է միայն ուղղական հոլովով դրված բառաձևը (հոլովման մյուս՝ թեքական ձևերն ինքնին իմաստակիր չեն, քանի որ թեքումը ենթադրում է կախյալ հարաբերություն). «որպէս՝ Փիլոն. Փիլոնի, Փիլոնայ եւ այսպիսի յայլոցն, որք ոչ են անուանք, ըստ դիալէդիկաց, այլ են հոլովք անուանց եւ հոլովականք. ուստի ուղղականն միայն ասի անուն» (ՄՄ 69, 275ա), հմմտ.՝ “….ut 'Catonis, Catoni', et sic de aliis, que non sunt nomina secundum dialeticos, sed casus nominum, sive obliqui; unde solus nominativus sive solus rectus dicitur esse nomen”(Hisp., Tr., 2) («….ինչպես՝ Կատոնի, Կատոնին և այսպես մյուսների դեպքում, որոնք անուններ չեն, ըստ տրամաբանների, այլ անունների հոլովներ կամ թեքականներ, ուստի միայն ուղղականը կամ միայն ուղիղ ձևն է ասվում անուն»)։

Նույն սկզբունքով զանազանվում են բայական ձևերը. «Ուղղակին բաժանէ զբայն ի հոլովական բայիցն, որպէս՝ ընթանայր, ընթացաւ, ընթասցէ, որք ոչ են բայք՝ ըստ դիալէթիկաց, այլ՝ հոլովք բայից: .... Իսկ միայն բայ սահմանականն ներկայ ժամանակի կոչի բայ՝ ըստ դիալէթիկաց, որպէս՝ կու ընթանամ, կու ընթանաս, կու ընթանայ, կու ընթանամք, կու ընթանայք, կու ընթանան: Իսկ այլ չորս ժամանակ սահմանական խոնարհմանն եւ այլ ամենայն չորք խոնարհմունք ոչ են բայ, այլ՝ հոլովք բայից» (ՄՄ 69, 276ա-բ), հմմտ.՝ “….'recta' ponitur ad differentiam obliquorum verborum, ut 'currebat', et 'cucurrit' et 'curret', que non appellat dialeticus verba, sed verba obliqua.

նությունը վերագրվել է Դավիթ Անհաղթին). «Անուն է ձայն նշանական ըստ շարադրութեան առանց ամանակի, որոյ ոչինչ մասն է նշանական զատեալ», «Բայ է որ առնշանակէ ամանակ՝ որոյ մասն ոչինչ նշանակէ զատ, և է միշտ զայլմէց ասիցելոցն նշանակ». *Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ*, Վենետիկ, 1932, էջ 372-373:

Solum enim verbum presentis temporis indicativi modi dicitur esse verbum, reliqua enim verba eiusdem modi et aliorum modorum dicuntur verba obliqua" («Ուղիղը դրվում է ի տարբերություն թեք բայերի, ինչպես՝ վազում էր, վազեց և կվազի, որոնց տրամաբանը չի կոչում բայեր, այլ՝ թեք բայեր: Քանզի միայն սահմանական եղանակի ներկա ժամանակի բայն է կոչվում բայ, իսկ նույն եղանակի մնացած բայերը և մյուս եղանակների բայերը ասվում են թեք բայեր») (Hisp., Tr., 2-3):

Նախադասության (դատողություն) մեջ բայի «հոլովների» դերը պարզաբանելու համար՝ Բարդուղիմեոսը ճշտում է նրանց դիրքը ժամանակային հարաբերության մեջ. «….ի հոլովք բային ներփակի ինքնին բայն ներկայ ժամանակին: Իսկ անցեալն եւ ապառնին, որք են հոլովք բային, ասին՝ համեմատելով առ ներկայն» (ՄՄ 69, 278ա): Հմմտ.՝ Բոեթիուս՝ անցյալը և ապառնին, սկիզբ առնելով ներկայից կամ հանգելով նրան, պարփակում են ներկան՝ ներկայի շուրջն են. "Atque ideo futurum tempus ad praesens tendit, praeteritum a praesenti inchoat… Quidquid ergo uel futurum tempus uel praeteritum significat, quae tempora praesens complectuntur et circa sunt, non uerba sed uerborum casus dicuntur" («Ուստի և ապառնի ժամանակը ձգտում է դեպի ներկան, անցյալը սկիզբ է առնում ներկայից…. Արդ, այն ամենը, ինչ նշանակում է կա՛մ ապառնի ժամանակ, կա՛մ անցյալ, որոնք [այն] ժամանակներն [են, որ] ընդգրկում են ներկան և [նրա] շուրջն են, ասվում են ոչ թե բայեր, այլ բայերի հոլովներ»[5]): Ուստի անցյալը և ապառնին, ամփոփված լինելով ներկայի մեջ, կրում են կատարյալ միտք արտահայտելու նրա կարողությունը, բայց քանի որ թեքված ձևեր են, այդ դերը կատարում են ոչ ինքնուրույնաբար, այլ՝ կապակցվելով անվան հետ. «….թէ ասիցի՝ լինել այս, նոյն է՝ որպէս թէ ասէ՝

[5] **Boethius**, *Commentarium in librum Aristotelis Περὶ Ἑρμηνείας*, recensuit Carolus Meiser, pars prior, Lipsiae, 1877, p. 61.

հանդերձեալ, եւ թէ ասի՝ էր այս, նոյն է՝ որպէս թէ ասի՝ այս է անցեալ. վասն այնորիկ ի խոնարհմանց բային ընդ անուամբ լինի բացերեւութիւն» (արիստոտելյան ավանդույթ՝ խոսքը անհրաժեշտաբար կազմվում է բայից կամ նրա «հոլովից»[6]):

Բայի մեկնությանը Բարդուղիմեոսը հավելել է քերականական տեղեկություններ՝ հիմք ընդունելով և՛ հայկական, և՛ լատինական ավանդույթը: Այսպես, եղանակի կարգը ներկայացված է՝ Դիոնիսիոս Թրակացու հայ թարգմանչից ավանդված դասակարգման համաձայն. «….ըստ քերթողաց հինգ խոնարհմունք են բայից, որ են այսք՝ սահմանական, աներեւոյթ, հրամայական, ղղձական, ստորադասական. միայն առաջին խոնարհումն է բայ, որ է սահմանականն, այլեւ՝ ոչ բոլորովին» (ՄՄ 69, 276բ): Սահմանական եղանակի ներկա ժամանակը, որը տրամաբանական ըմբռնմամբ բայի ուղիղ ձևն է, տրված է խոնարհման հարացույցի մեջ. «Վասն զի այս առաջին խոնարհումնս, որ է սահմանական, բաժանի ի հինգ ժամանակս: Առաջինն է ներկայ՝ կու ընթանամ, երկրորդն է անցեալ անկատար, որպէս՝ կու ընթանայի, երրորդն՝ անցեալ կատարեալ՝ ընթացայ, չորրորդն՝ անցեալ գերակատար՝ ընթացեալ եմ, հինգերորդն է ապառնի՝ ընթացայց»):

Բայի անցյալ ժամանակի նույնպիսի հարացույց (3 ժամանակաձև) ընդունել է Հովի. Քոնեցին[7], նաև՝ նրա ժամանակակից, ունիթոռական մեկ այլ կենտրոնի (Ծործորի վանք) վարդապետ Հովի. Ծործորեցին՝ սակայն տերմինային որոշ տարբերություններով[8]:

---

[6] Տե՛ս **Aristotle**, *Categories. On Interpretation. Prior Analytics*, Loeb Classical Library 325, Cambridge, 1938, pp. 122-123 (V, 17a):

[7] Տե՛ս **Յովհաննէս Քոնեցի**, *Յաղագս քերականին*, բնագիրը՝ Լ. Խաչիկյանի, Ե., 1977, էջ 177: Տե՛ս նաև **Ս. Ավագյան**, *Հովհաննէս Քոնեցու «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» երկի քերականագիտական նշանակությունը.*– **Յովհաննէս Քոնեցի**, *Յաղագս քերականին*, Ե., 1977, էջ 80-81:

[8] Հմմտ.՝ «Եւ անցեալն ունի երիս զանազանակս. յարաձգական՝ որ է անցեալ եւ ոչ կատարեալ, գերակատար՝ որ է անցեալ եւ կատարեալ, իսկ յարակայ, որ է անցեալ

Բարդուղիմեոսի և Քոնեցու գործածած անվանումները անմիջապես լատինական ձևերից արված պատճենումներ են՝ անցեալ անկատար- praeteritum imperfectum անցեալ կատարեալ- praeteritum perfectum, անցեալ գերակատար - praeteritum plusquamperfectum (Prisc., Inst., 405)[9]: Ի տարբերություն հունաբան դասակարգման, որ ունի 4 ձև՝ յարաձգական, յարակայ, գերակատար, անորիշ, և պարունակում է արհեստականություններ՝ այս բաժանումը արտացոլում է գրաբարի բայի անցյալ ժամանակի արտահայտման ձևերը (*սիրէի, սիրեցի, սիրեալ եմ*):

Բայը և անունը, ինչպես նշվեց, սահմանված են որպես զուտ տրամաբանական կարգեր, քերականական հետաքրքրություն ներկայացնում են խոսքի մասերի հետագա բնորոշումները, որ տեղ են գտել հարակից կամ այլ հարցերի մեկնություններում: Այսպես, հետևելով արիստոտելյան-բոեթիուսյան ավանդույթին՝ Բարդուղիմեոսը անվանը վերագրված «որոշակի» հատկանիշը (տե՛ս վերևում) բացատրում է նրա որոշակիորեն սահմանված նշանակությամբ, ըստ այդմ՝ տարբերելով նաև դերանունը և հատուկ անունը. «….ամենայն անուն կա՛մ նշանակէ բնութիւն ինչ եզերեալ՝ որպէս մարդ, կա՛մ նշանակէ անձն եզերեալ՝ որպէս դերանունն, այսինքն՝ ես, դու եւ նա, կա՛մ նշանակէ զերկաքանչիւրսն ի միասին՝ որպէս Պղատոն, որ նշանակէ զբնութիւն եւ զանձն եզերեալ» (ՄՄ 69, 275բ) (հմմտ.՝ Բոեթիուս՝ “omne enim nomen significat aliquid definitum” («Քանզի ամեն անուն նշանակում է որոշակի բան») (Boeth., De syll.

վաղակատար». **Յովհաննէս Ծործորեցի**, *Համառաւտ տեսութիւն քերականի*, աշխատասիրութեամբ՝ Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1984, էջ 324-325: Տե՛ս նաև **Գ. Ջահուկյան**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Ե., 1954, էջ 276:

[9] Տե՛ս **G. Muradyan**, *“Fourteenth-Century Developments in Armenian Grammatical Theory through Borrowing and Translation: Contexts and Models of Yovhannes K‘rnets‘i’s Grammar Book”*.– Hungarian Historical Review 14, 2, 2025, p. 232:

categ. I, 795B)): Այսպիսով՝ դերանունը (տվյալ դեպքում՝ անձնական դերանունը) ցույց է տալիս խոսքային իրադրության «եզերեալ», այսինքն՝ որոշակի կողմերին՝ խոսողին, խոսակցին կամ երրորդ անձի: Հայերենի քերականության մեջ դերանվան այս հատկանիշը և՛ հունական, և՛ լատինական ծագում ունի, հմմտ.՝ Թրակացու թարգմանիչ. «Դերանունութիւն է բառ փոխանակ անուան առեալ՝ որոշեալ դիմաց յատկական»[10], ունիթոռ քերականներ՝ Հովի. Քոնեցի. «Դերանուն է մասն բանի հոլովական, որ եդեալ լինի փոխանակ յատուկ անուան և նշանակէ զյատուկ իմն անձն»[11], Հովի. Ծործորեցի. «Դերանուն է մասն բանի յոլովական, եդեալ ի տեղի յատուկ անուանն, ստոյգ զդէմս նշանակէ»[12], սրանց հիմքում լատին քերական Պրիսցիանուսի սահմանումն է. “Pronomen est pars orationis, quae pro nomine proprio uniuscuiusque accipitur personasque finitas recipit” («Դերանունը խոսքի մաս է, որն առնվում է յուրաքանչյուր հատուկ անվան փոխարեն և ստանում է որոշակի դեմքեր») (Prisc., Inst., 577): Հատուկ անվան բնորոշումը՝ եզերյալ բնություն և անձ, քերականական ճշգրիտ զուգահեռներ չունի. հունաբան ավանդույթում այն անվան «իսկ» տեսակն է. «Իսկ է որ զինքեան գոյութիւնն ցուցանէ»[13], Հովի. Քոնեցու քերականության մեջ անվանված է «յատուկ», որն

[10] *Արուեստ Դիոնիսեայ քերականի.*– **Ն. Ադոնց**, *Երկեր*, հ. Գ, Ե., 2008, էջ 26:

[11] **Յովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ., էջ 172: Տե՛ս նաև **Տ. Սիրունյան**, *Հովհաննես Քոնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները.*– Բանբեր Մատենադարանի, 24, 2017, էջ 124:

[12] **Յովհաննէս Ծործորեցի**, նշվ. աշխ., էջ 267: Տե՛ս նաև **Տ. Սիրունյան**, *Լատիներենի քերականության ազդեցության օրինակներ Հովհաննես Ծործորեցու «Համառաւտ տեսութիւն քերականի» աշխատության մեջ.* - Լեզու և լեզվաբանություն, 1(24), 2021, էջ 64-65:

[13] *Արուեստ Դիոնիսեայ քերականի*, էջ 18:

արտահայտում է «զյատուկ գոյացութիւն»[14] (հմմտ. Պրիսցիանուս՝ privata substantia (Prisc, Inst., 58)):

Դերանվան առնչությամբ ևս Բարդուղիմեոսը գործածել է անմիջապես լատիներենից պատճենված քերականական տերմիններ. ցուցական դերանուն (ՄՄ 69, 280բ) - pronomen demonstrativum (օր.՝ Prisc., Inst., 577), դերանվան «յառաջին դէմն» (ՄՄ 69, 317ա) - prima persona (օր.՝ Prisc., Inst., 423): Սրանք նույնպես վկայված են Հովի. Քոնեցու քերականության մեջ[15]:

Դատողության տերմինների կարգի փոփոխության, այսպես կոչված՝ «անդրադարձման» նկարագրության մեջ (հմմտ.՝ Hisp., Tr., 8- De triplici conversione) բայ-«ընդունելություն» (դերբայ) փոխակերպման դեպքերը քննվում են ժամանակի քերականական կարգի հիմքով. «….բայս այս, թէ տեսանէ, պարտ է փոխել ի յընդունելութիւնս այս, որ ասէ տեսանող» (ՄՄ 69, 290ա): Նույն կերպ՝ է - էակ (հունաբան հայերենում էական բայի ներկա դերբայը), էր - անցեալ, լինի - լինելոց, ապառնի / հանդերձեալ (futurus) (ՄՄ 69, 290բ): Այսպիսով՝ բայի հետևողությամբ «ընդունելությանը» հատկացվում է երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի, համապատասխանաբար *-ող*, *-եալ*, *-ոց* վերջավորություններով: Հունաբան ավանդույթում «ընդունելության» մեջ ներառվել են գրաբարի անորոշ և անցյալ դերբայները, Հովի. Քոնեցին սրանց ավելացրել է նաև ապառնի դերբայը, մինչդեռ *-ող* վերջավորությամբ ներկա դերբայը մեկնաբանելիս անհետևողականություն է ցուցաբերել՝ դրանք մերթ դուրս թողնելով «ընդունելության» կազմից՝ իբրև ոչ ժամանականիշ՝ բա-

[14] **Յովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ. էջ 164. *յատուկ* տերմինը գործածական է առ այսօր:

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 173, նաև՝ **G. Muradyan**, նշվ. աշխ., էջ 231, 235:

ռեր, մերթ ներկայացնելով իբրև «ընդունելության» ներկա անկատարի ձևեր[16]: Բարդուղիմեոսի հիշատակած «ընդունելության» ժամանակային ձևերը (*-ող, -եալ, -ոց*) արտացոլում են գրաբարի դերբայական երեք կերպերը՝ (կատարվող, կատարված, կատարելի)՝ արտահայտված ներկա, անցյալ, ապառնի դերբայներով:

Բ. «Բանի» և նրա ներքին հարաբերությունների մասին (շարահյուսական հարցեր)

«Բանի» (λόγος / oratio) վերաբերյալ Բարդուղիմեոսի և Հովի. Քոնեցու շարադրանքում համընկումներ է նկատել Ս. Ավագյանը: Ըստ նրա՝ «բանի» կատարյալ և անկատար տեսակները սահմանելիս Քոնեցին օգտվել է «Դիալեկտիկայից»[17], հմմտ.՝ Բարդուղիմեոս. «Եւ ասի կատարեալ բան, որ զկատարեալ միտս ծնանի յանձն լսողին, որպէս՝ մարդն է սպիտակ: Իսկ անկատար բան է այն, որ անկատար միտս ծնանի յանձն լսողին, որպէս՝ մարդ սպիտակ» (ՄՄ 69, 279բ) (թարգմանություն է Պ. Իսպանացու "Tractatus"-ից. “Oratio perfecta est que perfectum generat sensum in animo auditoris, ut 'homo est albus'; imperfecta oratio est que imperfectum generat sensum in animo auditoris, ut 'homo albus'” (Hisp., Tr., 3)), Քոնեցի. «Կատարեալն է, որ ծնանի կատարեալ իմացումն ի միտս լսողին, հիբար մարդ ընթանա, իսկ անկատարն է, որ ծնանի զանկատար իմացումն, հիկէն մարդ սպիտակ»[18]:

Ս. Ավագյանը նաև համեմատել է երկու բնագրերում տեղ գտած «բանի» հնչերանգային տեսակները՝ եզրակացնելով, որ Քոնեցու

[16] **Յովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ., էջ 184-185, նաև՝ **Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 99-100:

[17] Տե՛ս **Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 114:

[18] Տե՛ս **Յովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ., էջ 191, տերմինների լատ. աղբյուրների մասին տե՛ս **G. Muradyan**, նշվ. աշխ., էջ 233, 236:

տարբերակը («ցուցականք, հրամայականք, ղղձականք, ստորադասականք, աներևոյթք») ճշգրտությամբ զիջում է Բարդուղիմեոսի դասակարգմանը[19]. «Առաջինն է սահմանական, որպէս՝ մարդ կու ընթանայ: Երկրորդն է հարցական, որպէս՝ ո՞վ կու ընթանայ: Երրորդն է հրամայական, որպէս թէ՝ վառեա՛ հուր: Չորրորդն է ղղձական կամ աղաչական, որպէս թէ՝ լինիցիմ քաջ վարդապետ: Հինգերորդն է բան կոչնական, որպէս թէ՝ ո՛վ Աստուած, լո՛ւր ինձ» (ՄՄ 69, 279բ): Այս անվանումները պատճենված են լատիներենից՝ *սահմանական – indicativa*, *հարցական -interrogativa*, *հրամայական - imperativa*, *ղղձական կամ աղաչական - optativa vel deprecativa*, *կոչնական - vocativa*: Ամենայն հավանականությամբ՝ պատճենումները կատարվել են երկու աղբյուրից՝ Բոեթիուսից և Պ. Իսպանացուց, հմմտ.՝ “Interrogatiua, ut: Putasne anima immortalis est? Imperatiua, ut: Accipe codicem! Optatiua uel deprecatiua, ut: Faciat Deus. Vocatiua, ut: Adesto Deus. Enuntiatiua, ut: Socrates ambulat” («Հարցական, ինչպես՝ կարծում ես, թե հոգին անմա՞հ է: Հրամայական, ինչպես՝ վերցրո՛ւ մատյանը: Ղղձական կամ աղաչական, ինչպես՝ տա Աստված: Կոչական, ինչպես՝ [մեր] կողքի՛ն եղիր (կամ՝ օգնի՛ր, հմմտ.՝ լո՛ւր ինձ), ո՛վ Աստված: Հաստատական» (իմա՛ սահմանական), ինչպես՝ Սոկրատեսը քայլում է») (Boeth., De syll. categ. I, 797B-C) - “Orationum perfectarum alia indicativa, ut 'homo currit', alia imperativa, ut 'fac ignem', alia optativa, ut 'utinam essem bonus clericus', alia subiunctiva, ut 'si veneris ad me, dabo tibi equum'” («Կատարյալ բաներից (իմա՛ նախադասություններից) մեկը սահմանական է, ինչպես՝ մարդը վազում է,

[19] Տե՛ս **Ա. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 119-120:

մյուսը՝ հրամայական, ինչպես՝ կրա՛կ արա, մյուսը՝ ըղձական, ինչպես՝ երանի՛ թե լավ վարդապետ լինեի, մյուսը՝ ստորադասական, ինչպես՝ եթե գաս ինձ մոտ, քեզ ձի կտամ»)[20]:

Բանի հիմնական անդամների՝ ենթակայի և ստորոգյալի սահմանումների համեմատությունը ևս Ս. Ավագյանին հիմք է տվել պնդելու, որ Բարդուղիմեոսն ավելի հաջող է բնորոշել դրանք[21]. «Ենթակայ է, յորմէ ասի իր ինչ: Եւ՝ ստորոգեալ է, որ զայլմէ ասի»: Այս սահմանումները արիստոտելյան ավանդույթ են, որին հետևել է Դավիթ Անհաղթը. «….եթէ ոմն է (ենթական- Տ.Ս.)՝ յաղագս որոյ է բան, իսկ ոմն (ստորոգյալը- Տ.Ս.)՝ յաղագս նորա ասացեալ»[22], Բարդուղիմեոսը նույն սահմանումները տվել է սխոլաստիկ հիմքով, հմմտ.՝ Պ. Իսպանացի. “Subiectum est de quo aliquid dicitur; predicatum est quod de altero dicitur” («Ենթական այն է, որի մասին ասվում է ինչ-որ բան. ստորոգյալն այն է, ինչ ասվում է այլ բանի մասին») (Hisp., Tr., 4):

Ս. Ավագյանը Բարդուղիմեոսին վերագրել է նաև նախադասության «եղանակի շարահյուսական կարգի» իմացություն՝ մատնանշելով անվանական և բայական լրացումների «հստակ առանձնացման» դեպքեր[23]: Խոսքը տրամաբանական եղանակի (modus) արտահայտման ձևերի մասին է, որոնցով կառուցվում է «եղանակաւոր»

[20] Հմմտ.՝ նաև՝ ավանդական անվանումները՝ գործածված Արիստոտելի "Perihermeneias" երկի հայերեն հնագույն մեկնության մեջ (անանուն հեղինակի գործ, վերագրվել է Դավիթ Անհաղթին). «բացերեւականք, հարցականք, հրամանեանք, ըղձականք, հոշականք» (*Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ*, էջ 419):

[21] Տե՛ս **Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 121:

[22] **David the Invincible,** *Commentary on Aristotle's Prior Analytics*, Old Armenain Text with an English Translation, Introduction and Commentary by Aram Topchyan (Philosophia Antiqua 122, Commentaria in Aristotelem Armeniaca: Davidis Opera 2), Leiden–Boston, 2010, p. 80.

[23] Տե՛ս **Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 121:

կամ մոդալական դատողությունը (propositio modalis). Բարդուղիմեոսը, հենվելով լատինական աղբյուրների վրա (Թ. Ակվինացի, Պ. Իսպանացի[24]), եղանակը սահմանում է որպես «տարորոշումն իրին» (rei determinatio), որ կատարվում է ածականի և մակբայի միջոցով՝ համապատասխանաբար որոշարկելով ենթական և ստորոգյալը: Այսպես՝ «….կարէ գոլ յարանուամբ եւ տարորոշէ զենթակայն, որպէս յորժամ ասի՝ մարդ սպիտակ ընթանայ, մարդն է ենթակայ, եւ սպիտակն է յարանուն, որ տարորոշէ զմարդն: Կամ կարէ լինել տարորոշումն մակբայիւն, որ տարորոշէ զբայն, որպէս յորժամ ասի՝ Սոկրատէս ընթանայ արագապէս» (ՄՄ 69, 294ա), հմմտ.՝ "….fit per adiectionem nominis adiectivi, quod determinat substantivum, ut cum dicitur homo est albus, vel per adverbium, quod determinat verbum, ut homo currit bene" («….կատարվում է ածական անվան հավելմամբ, որը որոշարկում է գոյականը, ինչպես երբ ասվում է՝ մարդը սպիտակ է, կամ մակբայի միջոցով, որը որոշարկում է բայը, ինչպես՝ մարդը լավ վազում է»)[25]: Ինչպես նկատելի է, *adjectivus*-ը թարգմանված է *յարանուն*, որ հունաբան քերականության մեջ նշանակել է որևէ անունից ածանցված, ինչյունական կազմով առնչակից անուն[26]. որպես անվան մակդիր կամ ածական՝ նորաբանություն է և կարելի է համարել այդ հասկացության նախնական անվանում[27]:

«Բանի» անդամների կիրառության վերաբերյալ ուշագրավ դիտողություններ կան այլ մեկնություններում: Մասնավորապես,

---

[24] Տե՛ս **S. Սիրունյան**, Բարդուղիմեոս Մարաղացու տրամաբանության լատիներեն աղբյուրները, էջ 115-117:

[25] **Thomas de Aquino**, *De propositionibus modalibus*.– www.corpusthomisticum.org/dpp.html (պատառիկ՝ առանց էջադրման).

[26] Տե՛ս *Արուեստ Դիոնիսեայ քերականի*, էջ 15-16:

[27] *Adjectivum*-ի հայերեն համարժեք *ածական*-ը ավելի ուշ կազմություն է, ստեղծվել է 17-րդ դարում Կղ. Գալանոսի կողմից (տե՛ս նույնի *Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ*, Հռոմ, 1645, էջ 24):

Բարդուղիմեոսը, ըստ տրամաբանական ավանդույթի, բայը ճանաչելով բացարձակ ստորոգյալ, որը երբեք չի կարող լինել ենթակա, և հաստատելու համար այս դրույթը, վերլուծում է բայի անվանական կիրառության (փոխանունության) հնարավորությունը. «Իսկ բայն՝ ըստ այնմ, որ է բայ, ոչ երբէք կարէ լինել ենթակայ կամ դնիլ ի կողմանէ ենթակային, եւ թէ դնի, կորուսանէ զբնութիւն բայի, եւ անցանի ի բնութիւն անուան» (ՄՄ 69, 278բ): Սակայն որպես փոխանուն բայ՝ ներկայացնում է բայածականը. «Որպէս ասելով, թէ՝ սիրելին բարի է, սիրելին ի նախադասութիւնս այս է ենթակայ. վասն այնորիկ ոչ է բայ, այլ անցանի ի բնութիւն անուան» (նույն տեղում): Փոխանունությունը ճանաչել է նաև Հովի. Քոնեցին և այն կոչել առանձին տերմինով՝ «գոյացականիլ»[28]:

Ժամանականիշ մյուս խոսքի մասը՝ «ընդունելությունը», ի տարբերություն բայի, «բանի» մեջ ունի փոփոխական դեր. «Իսկ ընդունելութիւնն ոչ միշտ դնի ի կողմանէ ստորոգելոյն, այլեւ դնի ի կողմանէ ենթակային, որպէս՝ վերծանողն ընթանայ, վերծանողն է ընդունելութիւն, այլ աստ է ենթակայ» (ՄՄ 69, 278ա-բ): Այսինքն՝ «ընդունելությանը», բացի ստորոգյալից, հատկացվում է նաև ենթակայի դեր:

«Սոֆիստական» բանավեճի նկարագրության մեջ Բարդուղիմեոսը «անպատշաճ» խոսքի *solecismus* (= շարահյուսական սխալ) կոչվող տեսակի ներքո քննում է քերականական սխալի հանգեցրած դատողության խաթարման դեպքերը. «Իսկ է սօլօէսիզմուսն, յորժամ ոք խօսի ընդդէմ կանոնական յայտնապէս արհեստի քերականութեան» (ՄՄ 69, 316բ-317ա), հմմտ.՝ “Solecismus est vitium in con-

[28] **Յովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ., էջ 193, տե՛ս նաև **Ս. Ավագյան**, նշվ. աշխ., էջ 116: Հիմքը *գոյացական* տերմինն է՝ պատճենված *substantivum*-ից. տե՛ս **G. Muradyan**, նշվ. աշխ., էջ 138:

textu partium orationis contra regulas artis gramatice factum" («Սոլեցիզմուսը խոսքի մասերի կապակցության մեջ թույլ տրված սխալն է ընդդեմ քերականական արվեստի կանոնների») (Hisp., Tr., 94): Ապա տրված է նախադասության անդամների կապակցության հիմնարար կանոններից մեկը՝ ենթակայի և ստորոգյալի պարտադիր համաձայնություն դեմքով և թվով. «Զոր օրինակ՝ է կանոն քերականութեան, զի ուղղականն ընդ բային պարտի համաձայնիլ երկոքումբք, այսինքն՝ ի թիւն եւ ի յանձն», սրան հաջորդում է համաձայնության խախտման վերլուծությունը. «….թէ ոք ասիցէ՝ մարդ ընթանան, ոչ բարիոք ասաց, զի տարաձայնի նիւթիւն: Նաեւ թէ ասէ՝ ես ընթանայ, ոչ բարիոք ասաց, զի տարաձայնին ի յանձն, զի եսն է յառաջին դէմն եւ ընթանայն՝ յերրորդն» (ՄՄ 69, 317ա):

Նախադասության անդամների պարտադիր համաձայնության կանոնը հայերենի քերականության մեջ ձևակերպել է Հովհ. Քոնեցին. «Գոյացականքն և մակադրականքն պարտին համաձայնիլ ի յերիս պատահմունս, այսինքն ի սերս, ի թիւս և ի յանկմունս»[29]: Հատկանշական է՝ Քոնեցին հիմք է ընդունել գոյական-ածական համաձայնությունը, սակայն նաև լատինական քերականության ազդեցությամբ նկատի է առել անվան սեռի քերականական կարգը, որ խորթ է հայերենին:

Եզրակացություն

Այսպիսով՝ Բարդուղիմեոս Մարաղացու քերականական դիտարկումները, որ վերաբերում են խոսքի մասերի հատկանիշներին և կապակցման սկզբունքներին, մեծ մասամբ լատինական աղբյուրներից են և արտացոլելով այդ միջավայրի ըմբռնումները՝ նոր նյութ են տալիս հայերենի քերականությանը: Կարևոր են հատկապես՝

[29] Տե՛ս **Յովհաննէս Քոնեցի**, նշվ. աշխ., էջ 192: *Համաձայնիլ* տերմինի մասին տե՛ս **G. Muradyan**, նշվ. աշխ., էջ 236:

ա) բայի անցյալի 3 ժամանակաձևի ընդունումը՝ անցեալ անկատար (= praeteritum imperfectum), անցեալ կատարեալ (= praeteritum perfectum), անցեալ գերակատար (= praeteritum plusquamperfectum), բ) «ընդունելությանը» 3 ժամանակի հատկացումը՝ ներկա (*-ող*), անցյալ (*-եալ*), ապառնի (*-ոց*), գ) «բանի» անկատար, կատարյալ և հնչերանգային տեսակների նկարագրությունը, դ) ենթակա-ստորոգյալի պարտադիր համաձայնության ձևակերպումը, ե) փոխանունության ճանաչումը:

Ընդ որում՝ հարկ է նշել, որ «Դիալեկտիկա»-ի այն բոլոր քերականական տեղեկությունները և տերմինները, որոնք չունեն զուգահեռներ հունաբան քերականական ավանդույթում, նույնությամբ կամ որոշ տարբերություններով վկայված են նաև Հովհ. Քոնեցու քերականության մեջ:

Օգտագործված գրականություն

Ավագյան Ս., Հովհաննես Քոնեցու «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» երկի քերականագիտական նշանակությունը.– Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, Ե., 1977:

Արուեստ Դիոնիսեայ քերականի.- Ն. Ադոնց, Երկեր, Գ հ., Ե., 2008:

Գալանոս Կղ., Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ, Հռոմ, 1645:

Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վենետիկ, 1932:

Խաչիկյան Լ., Քոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը.– Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, Ե., 1977:

Ծործորեցի Յովի, Համառաւտ տեսութիւն քերականի, աշխատասիրութեամբ՝ Լ. Խաչերեանի, Լոս Անճելըս, 1984:

Ջահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:

Սիրունյան Տ., Բարդուղիմեոս Մարաղացու տրամաբանության լատիներեն աղբյուրները. «Դիալեկտիկա» և "Summulae Logicales", Էջմիածին, Ջ, Է, 2019:

Սիրունյան Տ., Լատիներենի քերականության ազդեցության օրինակներ Հովհաննես Ծործորեցու «Համառաւտ տեսութիւն քերականի» աշխատության մեջ, Լեզու և լեզվաբանություն, 1 (24), 2021, էջ 62-68:

Սիրունյան Տ., Հովհաննես Քռնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները, Բանբեր Մատենադարանի, 24, 2017, էջ 122-140:

Քռնեցի Յովի, Յաղագս քերականին, բնագիրը՝ Լ. Խաչիկյանի, Ե., 1977:

Aristotle, Categories. On Interpretation. Prior Analytics, Loeb Classical Library 325, Cambridge, 1938.

Boethius, Commentarium in librum Aristotelis Περὶ Ἑρμηνείας, recensuit Carolus Meiser, pars prior, Lipsiae, 1877.

David the Invincible, Commentary on Aristotle's Prior Analytics, Old Armenain Text with an English Translation, Introduction and Commentary by Aram Topchyan (Philosophia Antiqua 122, Commentaria in Aristotelem Armeniaca: Davidis Opera 2), Leiden–Boston, 2010.

Muradyan G., Fourteenth-Century Developments in Armenian Grammatical Theory through Borrowing and Translation: Contexts and Models of Yovhannes K'rnets'i's Grammar Book, Hungarian Historical Review 14, 2, 2025, p. 214-246:

Oudenrijn M.-A., L'évêque dominicain fr. Barthélemy, fondateur supposé d'un couvent dans le Tigré au 14^{e} siècle, Rassegna di Studi Etiopici, 5, 1946, p. 7-16.

Oudenrijn M.-A., Linguae Haicanae Scriptores Ordinis Praedicatorum Congregationis Fratrum Unitorum et FF. Armenorum Ord. S. Basilii citra Mare consistentium quotquot huc usque innotuerunt, Bern, 1960:
Oudenrijn M.-A., Notes sur quelques ouvrages Armeniens de provenance Dominicaine, Բազմավէպ, 1-2, 1982, էջ 53-67.
Peter of Spain (Petrus Hispanus Portugalensis), Tractatus, called afterwards Summule logicales, First Critical Edition from the Manuscripts with an Introduction by L. M. de Rijk, Assen, 1972.
Priscianus, Institutiones grammaticae, Libri I-XII, ex recensione M. Hertzii, Lipsiae, 1855.
Thomas de Aquino, De propositionibus modalibus.–
www. corpusthomisticum.org/dpp.html.

Ձեռագրացուցակ և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1984:
Բարդօլիմէոս, Հաւաքումն համառօտ և յոյժ օգտակար ի Դիալէտիկէն, որ տրամաբանութիւն.– Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 69, Ժողովածոյ, գրիչ՝ ֆրա Յոհան Քռնայեցի, Ճահուկ, 1401 թ., 266ա-346բ:

Համառոտագրություններ

ՄՄ – Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր
Boeth., De syll. categ.- Boethius, De syllogismo categorico.- https://digiliblt.uniupo.it/teidocs/idno/DLT000055/build/pdf.
Hisp., Tr. – Peter of Spain (Petrus Hispanus Portugalensis), Tractatus.
Prisc., Inst. – Priscianus, Institutiones grammaticae.

Sirunyan Tigran- Grammatical Data in Bartholomew of Maragha's "Dialectica": Morphological and Syntactic Issues.- The Catholic scholar Bartholomew of Maragha (14th c.), in his work "Dialectic", in parallel with logical interpretations, also addressed grammatical questions. His observations, concerning the properties of the parts of speech and the principles of syntactic relations, are based primarily on Latin sources and reflect the understanding of that environment, and provide new material for Armenian grammar. Particularly noteworthy are: a) the division of the past tense of the verb into three forms– imperfect, perfect, and pluperfect; b) the attribution of three tenses to the participle– present (-nդ), past (-եալ), and future (-ng); c) the description of the imperfect, perfect, and intonational types of the sentence; d) the formulation of obligatory subject-predicate agreement; e) the recognition of substantivization.

At the same time, all grammatical information and terms in "Dialectic" that have no parallels in the Hellenizing grammatical tradition are also attested in the grammar of the Armenian Catholic scholar Yovhannēs K‘rnets‘i (14th c.).

Keywords: Unitores, Grammar, Parts of Speech, Noun, Verb, Boethius, Priscianus.

Sirunyan Tigran, PhD in Philology, H. Acharian Institute of Language RA MESCS, researcher.

Сирунян Тигран - Грамматические сведения в "Диалектике" Варфоломея Марагского: Морфологические и синтаксические вопросы.- Католический учёный Варфоломей Марагский (14 в.) в своем сочинении "Диалектика", наряду с логическими толкованиями, также рассматривает грамматические вопросы. Его замечания, касающиеся свойств частей речи и принципов синтаксических связей, основанные преимущественно на латинских источниках и отражающие представления данной среды, дают новый материал для грамматики армянского языка. Особо следует отметить: а) разделение прошедшего времени

глагола на на три формы– имперфект, перфект и плюсквамперфект; b) приписывание причастию трёх времён– настоящего (-nդ), прошедшего (-եալ) и будущего (-ոց); c) описание имперфектного, перфектного и интонационного типов предложения; d) формулировку обязательного согласования подлежащего и сказуемого; и e) выделение субстантивации.

При этом, все грамматические сведения и термины в "Диалектике", не имеющие параллелей в грецизирующей грамматической традиции, также встречаются в грамматике армянского католического учёного Ованнеса Крнеци (14 в.).

Ключевые слова: униторы, грамматика, части речи, имя, глагол, Боэций, Присциан.

Сирунян Тигран, кандидат филологических наук, Институт языка им. Р. Ачаряна МОНКС РА, научный сотрудник.